Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ԼԻԼԻԱ ԱՐԵԳԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ԺԲ.00.02- Հանրային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Սասուն Հովհաննեսի Բաղդասարյանի «Պաշտպանության ոլորտում հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Պետության սահմանադրական գործառույթների համակարգում երկրի պաշտպանությունը ունի առաջնային դեր և նշանակություն: Պաշտպանության գործառույթը բարդ և բազմակողմանի գործունեություն է: Իրավական պետությունում պաշտպանության ապահովման կարևոր միջոցներից է իրավական կարգավորումը, դրա արդյունավետությունը, պաշտպանության խնդիրների լուծման նպատակամղվածությունը և այլն: Պաշտպանության գործառույթի իրավական կարգավորման բազմակամարդակ աստիճանները անհրաժեշտ է ենթարկել հատուկ սահմանադրա-իրավական հետազոտության, ինչով պայմանավորված Ս.Հ. Բաղդասարյանը նպատակ է հետապնդում բացահայտելու գործառույթի համակարգային միասնությունը, ամբողջականությունը, վեր հանելու դրա մեջ առկա իրավական խնդիրները, մշակելու իրավական լուծումներ և իմաստավորելու դրանք:

Կախված երկրի աշխարհաքաղաքական առանձնահատկություններից՝ տարբեր պետություններ տարբեր կերպ են կարևորում և արժևորում իրենց պաշտպանության խնդիրները: Սրանով պայմանավորված պաշտպանական համակարգի սահմանադրական և ճյուղային իրավական կարգավորումը պետք է լինի գրեթե կատարյալ, իսկ դրան հասնելու միջոցը գիտական հետազոտությունն է, պաշտպանության կառուցակարգի իրավական տարրի վերլուծությունը, դրանում առկա խնդիրների վերհանումը, լուծումների առաջադրումը:

Պաշտպանական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հիմնահարցերի տեսական իրավական հետազոտման հրատապության հիմքերը գալիս են նաև պաշտպանական համակարգի, հատկապես դրա կառավարման և իրավական կարգավորման տարրերի ձևավորման պատմահրավական միտումներից: Ի տարբերություն որոշ պետությունների Հայաստանի Հանրապետությունը չունի լավ մշակված, փորձարկված պետահրավական պաշտպանական կառուցակարգեր և համապատասխան պատմահրավական փորձ: Սակայն պետք է արձանագրել, որ սահմանադրական բարեփոխումների վերջին գործընթացն արմատական վերակառուցում իրականացրեց նաև պաշտպանական հարաբերությունների կարգավորման նորմատիվային հիմքերում, որը հատուկ վերլուծության կարիք ունի:

Գիտական մշակվածության տեսանկյունից հետազոտության առարկայի և դրանից բխող խնդիրների շրջանակներում կատարված իրավական ուսումնասիրություններ Հայաստանում գրեթե չկան՝ թե' ընդհանուր տեսական, թե' ճյուղային իրավական գիտություններում: Հաշվի առնելով այս հանգամանքը և թեմայի առարկան՝ սահմանադրական իրավունքում նկատվում է հետազոտությունների պակաս, որի հաղթահարման փորձ է Սասուն Բաղդասարյանի ատենախոսական աշխատանքը:

Հեղինակի հետազոտության նպատակն է ամբողջական տեսահրավական վերլուծության ենթարկել պաշտպանական ոլորտի պետական կառավարման ընդհանուր սահմանադրական (վերին մակարդակի) համակարգը, այդ գործառույթի իրականացման իրավական առանձնահատկությունները՝ պայմանավորված զինված ուժերի յուրահատուկ բնույթով, դրանում կառավարման տարբեր մակարդակների առկայությամբ: Վերոգրյալով պայմանավորված Ս.Հ. Բաղդասարյանը նպատակ ունի վեր հանել առկա խնդիրները, իրավական կարգավորման բացերը, մշակել դրանց լրացման, կարգավորման կատարելագործման իրավական առաջարկություններ:

Աշխատանքում փորձեր է արվել ռազմական արվեստի կողմնորոշիչ գիտական հիմնադրույթների օգնությամբ համակարգված հետազոտել և ամփոփել ՀՀ-ում պաշտպանության ոլորտի հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնական հարցերը՝ ատենախոսության նպատակով նախորոշված հետազոտական խնդիրների շրջանակում, վեր հանել պաշտպանական

սահմանադրական մի շարք ինստիտուտների խնդրահարույց կողմերը, առաջարկել դրանց լուծման ավելի արդյունավետ, երկրի պաշտպանության շահերից բխող լուծումներ, որոնք համահունչ են սահմանադրական արդի տեսության ու սահմանադրական սկզբունքների պահանջներին: Ատենախոսական հետազոտության իրականացման արդյունքում գիտական նորույթ պարունակող հիմնադրութները հիմնավորված և փաստարկված են աշխատանք հիմնական բովանդակությունում և ամփոփված են աշխատանքի եզրակացությունում:

Հետազոտության տեսական հիմքերն աչքի են ընկնում նրանով, որ ատենախոսը հետազոտական խնդիրներն իրականացնելու համար օգտագործել է մի շարք գիտական ոլորտների տեսական մոտեցումները և աղբյուրները, այն է՝ ռազմական արվեստի (ստրատեգիա, օպերատիվ արվեստ և մարտավարություն), ռազմական իրավունքի, կառավարման տեսության, պետության և իրավունքի տեսության, և իհարկե, սահմանադրական իրավունքի: Հեղինակին հաջողվել է ռազմական ուսմունքների մեջ խորանալու հետ մեկտեղ՝ դիտարկելու վերհանված խնդիրները հենց իրավական տեսանկյունից և արել է դա հմտորեն:

Գտնում ենք, որ ատենախոսական հետազոտության միջոլորտային բնույթով պայմանավորված դրա արդյունքները նշանակություն ունեն ոչ միայն սահմանադրական ու վարչական իրավունքի, այլև պետության և իրավունքի տեսության, ռազմական արվեստի տեսության և այլ գիտական ոլորտների համար, ինչպես նաև կարող են օգտագործվել սահմանադրական, պաշտպանական բարեփոխումների ընթացքում, պաշտպանության համակարգի կառավարման վերին մակարդակի սահմանադրական կարգավորման հարցերը շոշափոխ իրավական առարկաների դասավանդման ընթացքում:

Ս.Հ. Բաղդասարյանի ատենախոսական հետազոտությունն ունի գիտական արժանահավատ մակարդակ, աչքի է ընկնում մոտեցումների ու արդյունքների գիտական նորույթով, ունի ներքին միասնություն, համալիրություն, համակարգվածություն, հարուստ միջոլորտային աղբյուրագիտական հիմքեր: Ակնհայտ է նաև աշխատանքի արդիականությունը և դրա արդյունքների գործնական նշանակությունը մեր օրերի արտակարգ կառավարման պայմաններում: Աշխատաքն

աչքի է ընկնում բացարձակ տրամաբանական շարադրանքով, դյուրընթեռնելի է, միաժամանակ, զուրկ չէ գիտականությունից: Այդ ամենը աշխատանքը հետաքրքրական և մատչելի է դարձնում ոչ միայն իրավաբան գիտնականների համար, այլ նաև տարաբնույթ ոլորտի մասնագետների և այլ ընթերցողների համար:

Աշխատանքն առանձնանում է նաև այլ դրական կողմերով, սակայն նպատակահարմար ենք գտնում հաջողված և գիտականորեն հիմնավորված սույն ատենախոսության վերաբերյալ ներկայացնել որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ատենախոսության I գլխի 1-ին ենթագլխում հեղինակն անդրադառնում է «պաշտպանություն» հասկացության, որը տրված է «Պաշտպանության մասին» 2017թ. ՀՀ օրենքով, և նշում է. «Օրենսդրական այս հասկացությունը որոշակիորեն տարբերվում է նախորդ օրենքով ամրագրված բնորոշումից» (էջ 24): Հեղինակն առանձին հղմամբ անդրադառնում է նաև 2008թ. օրենքով տրված բնորոշմանը՝ սահմանափակվելով նկարագրությամբ: Գտնում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակը վերլուծության ենթարկեր նշված սահմանումները և գիտական վերլուծության հիման վրա դրանց տար գնահատական:

2. Աշխատանքի I գլխի 2-րդ ենթագլխում խոսելով պետության պաշտպանության գործառույթն իրականացնող սուբյեկտային կազմի մասին, հեղինակը նշում է, որ «եթե պետության մի շարք գործառույթների իրականացմանը մասնակցում են նաև քաղաքացիական հասարակության տարաբնույթ կազմակերպությունները, ինչպես նաև անհատներն՝ իրենց գործունեությամբ, ապա պաշտպանական գործառույթի իրականացման կառուցակարգում, դրա կազմակերպման և կառավարման բոլոր մակարդակներում՝ բարձրագույն քաղաքական ղեկավարումից մինչև ագրեսորի կամ սահմանախախտի դեմ տարվող մարտն իրականացնում են հանրային իշխանական կառույցները:»: Չվիճարկելով հեղինակի պնդումն առ այն, որ «պաշտպանության գործառույթի իրականացման ողջ պատասխանատվությունը և գործառութային կենսագործման հանրային իրավական պարտականությունը կրում են պետությունը, դրա մարմիններն ու հատուկ կառույցները», այնուամենայնիվ, գտնում ենք, որ, միգուցե ավելի նվազ ծավալնելով և իրավական հստակ կառուցակարգերի բացակայության

պայմաններում, սակայն քաղաքացիական հասարակության տարաբնույթ կազմակերպությունները, անհատները որոշ դեպքերում մասնակցում կամ, առնվազն, աջակցում են պետությանը՝ պաշտպանության գործառույթի իրականացման հարցում: Ավելին, կարիք կար անդրադառնալու ՀՀ-ում գործող ոչ պետական այն կառույցներին, որոնք էականորեն մասնակցում են պետության պաշտպանության գործառույթի իրականացմանը (օրինակ՝ «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությունը): Ավելին, ժամանակակից աշխարհում զինված կոնֆլիկտներում չափազանց մեծ չափաբաժին են ունենում ոչ ռազմական բնույթի միջոցների կիրառումը (օրինակ՝ տեղեկատվական, տնտեսական և այլն), և այս համատեքստում անհատների մասնակցությունը պետության պաշտպանությանը կարող է չափազանց էական լինել՝ իրավական հիմքերի առկայության պայմաններում: Աշխատանքը էականորեն կշահեր, եթե հեղինակն անդրադառնար վերը նշված հարցերին:

Հավելենք նաև, որ հեղինակը նույն հարցին անդրադարձել է նաև աշխատանքի III գլխի 1-ին ենթագլխում (էջ 98)՝ խոսելով պաշտպանական քաղաքականության մասին: Մասնավորապես, նշվում է, որ այն ներառում է *ժողովրդին և զինված ուժերին ագրեսիային հակահարված տալուն պատրաստելը, ինչպես նաև տնտեսությունը, առողջապահությունը, տեղեկույթը, կրթությունը և դաստիարակությունը նման փորձությանը նախապատրաստելը*: Վիճելի է հեղինակի այն պնդումը, որ նշված հարցերում քաղաքացիական հասարակությունն ու անհատները չեն մասնակցում:

3. Աշխատության III գլխի 2-րդ ենթագլխում (էջ 112) անդրադառնալով փոխակերպման սահմանադրական ընթացակարգերին կամ պատերազմի ժամանակաշրջանում ռազմական կառավարման արտակարգ համակարգին, հեղինակը նշում է, որ մեր երկրի համար այս խնդիրը շատ կարևոր է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ «անկախության առաջին շրջանում Հանրապետությունը գտնվել է չհայտարարված իրական պատերազմի մեջ, մինչ հիմա առկա է Արցախի Հանրապետության պաշտպանության խնդիրը, նոր պատերազմն անհավանական չէ, իսկ մեր աշխարհաքաղաքական կացությունը բավականին բարդ, խճճված ու ծանր է»: Ցավոք, նշվածը Արցախին նվիրված միակ նախադասությունն է աշխատանքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտության թեմայի շրջանակներում Արցախի

պաշտպանության ոլորտում հարաբերությունները և դրանց կարգավորման իրավական հիմնախնդիրներն փոխադարձաբար ուղղակիորեն անդրադառնում են Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի հարաբերությունների և ՀՀ ինքնապաշտպանության բնույթին, գտնում ենք, որ կարիք կար հիշատակված հարցը դարձնել հետազոտման առարկա:

Գտնում ենք, որ նշված նկատառումները չեն նսեմացնում ատենախոսության ակնառու արժանիքները:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սասուն Հովհաննեսի Բաղդասարյանի «Պաշտպանության ոլորտում հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությանը, բավարարում է ՀՀ Կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
իրավաբանական վարչության պետ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Լ. Ա. Հակոբյան

25.06.2020

Լ.Ա. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝

Գ. Պետրոսյան

25.06.2020